



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

06.02.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/80

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.12.2017թ. թիվ 03/26-3/24233-17 գրությամբ «Ջերմուկշին» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ 85772452) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 19.12.2017թ. թիվ 1028 և 21.12.2017թ. թիվ 1037 գրությունների հիման վրա, 25.12.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Ջերմուկշին» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը 19.12.2017թ. թիվ 1028 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏՀՀ) կողմից ս.թ. դեկտեմբերի 11-ին «ՋԳՀ-ԱՇՁԲ-2017/6» ծածկագրով իրականացված մրցույթի շրջանակներում ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկել ՀՀ ՖՆ պահանջվող էլեկտրոնային հասցեներին և ներկայացվել է «ՋԳՀ-ԱՇՁԲ-2017/6» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի մասին պահանջվող տեղեկատվությունը: ՖՆ եզրակացությունը ստացվել է դեկտեմբերի 12-ին, որում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող: Հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարը կազմել է 2,758,952 ՀՀ դրամ:

Ս.թ. դեկտեմբերի 13-ին «ՋԳՀ-ԱՇՁԲ-2017/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի գնահատման նիստում «Ջերմուկշին» ՓԲԸ-ի հայտը մերժվել է և առաջարկ է ներկայացվել մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ս.թ. դեկտեմբերի 19-ին «Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից ստացվել է տեղեկանք ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 12 բաժնից՝ 2017թ. դեկտեմբերի 18-ի դրությամբ:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Լիլիթ Սեդրակյանը:

3. «Ջերմուկշին» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Խորհուրդը դիմել է «Ջերմուկշին» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.12.2017թ. թիվ 03/26-3/24233-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Կորյուն Ստեփանյանը:

4. ՍՑ-ԷՍ-2017/80 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 25.12.2017թ. թիվ 03/26-3/24233-17, գրությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 19.12.2017թ. թիվ 1028 և 21.12.2017թ. թիվ 1037 գրությունները և կից ներկայացված փաստաթղթերը, «ՋԳՀ-ԱՇՁԲ-2017/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՋԳՀ-ԱՇՁԲ-2017/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 11.12.017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 և 13.12.017թ. ժամը 12:00-ին նիստի թիվ 3 արձանագրությունները, ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 12 բաժնի կողմից 29.01.2017թ. «Ջերմուկշին» ՓԲԸ-ին տրված տեղեկանքը.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարված «ՋԳՀ-ԱՇՁԲ-2017/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել «Ջերմուկշին» ՓԲԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված

մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՋԳՀ-ԱՇՁԲ-2017/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 11.12.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության 8.1 կետով որոշել է «ՋԳՀ-ԱՇՁԲ-2017/6» ծածկագրով գնանշման հարցման 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ին (ընթացակարգի շրջանակներում Ընկերության առաջարկած ընդհանուր գինը կազմել է 17,340,000 ՀՀ դրամ):

Հանձնաժողովը 13.12.2017թ. ժամը 12:00-ին նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ «ՋԳՀ-ԱՇՁԲ-2017/6» ծածկագրով իրականացված մրցույթի շրջանակներում ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկել ՀՀ ՖՆ պահանջվող էլեկտրոնային հասցեներին և ներկայացվել է «ՋԳՀ-ԱՇՁԲ-2017/6» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի մասին պահանջվող տեղեկատվությունը: ՖՆ եզրակացությունը ստացվել է դեկտեմբերի 12-ին, որում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող: Հայտը ներկայացնելու օրվա՝ 11.12.2017թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարը կազմել է 2,758,952 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության 1.1 կետով Հանձնաժողովը որոշել է «Ջերմուկշին» ՓԲԸ-ի հայտը մերժել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման

խրոհիրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարված «ԶԳՀ-ԱՇԶԲ-2017/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 8.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

- 8.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից

ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 8.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով 26.01.2017թ. կայացած նիստի ժամանակ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի տնօրենը հայտնեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացության մեջ արտացոլված ժամկետանց հարկային պարտավորությունը ՀՀ ԿԱ ՊԵԿ համապատասխան ստորաբաժանման աշխատակցի վրիպման արդյունք է, որը թյուրիմացաբար ներկայացվել է ի պատասխան Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի հարցմանը: Ընկերության տնօրենը խորհրդին խնդրեց տեղի ունեցածը համարել թյուրիմացություն, և Ընկերությանը չներառել Ցուցակում:

Միաժամանակ, Ընկերությունը խորհրդին ներկայացրեց ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 12 բաժնի կողմից 29.01.2017թ. «Ջերմուկշին» ՓԲԸ-ին տրված տեղեկանքը, որի համաձայն Ընկերությունը 11.12.2017թ. դրությամբ ունեցել է 249,595 ՀՀ դրամի չափով դեբետային մնացորդ (փաստացի գերավճար):

Այսպիսով, խորհուրդն արձանագրում է, որ «Ջերմուկշին» ՓԲԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 11.12.2017թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն չի ունեցել:

Միաժամանակ, Խորհուրդը գտնում է, որ հանձնաժողովը՝ Ընկերության հայտը մերժելով, գործել է իրավաչափ, քանի որ կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված՝ կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Ջերմուկշին» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.12.2017թ. գրությամբ «Ջերմուկշին» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ 85772452) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ